Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ԵՎ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Ա. Մ. ՈՍԿԱՆՅԱՆ, Ռ. Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Իր տեսական պայքարի բոլոր էտապներում, սկսած դեռևս 1893 թ., հետևողականորեն մարտնչելով նարոդնիկության, «տնտեսական մատերիալիզմի», աստվածաշինարարության, մախիզմի և մարքսիզմին հակառակորդ քաղաքական այլ հոսանքների դեմ, Վ. Ի. Լենինը հենվում էր պատմության վրա, զարգացնելով նրա գիտական ըմբռնումը։ Պատմության և սոցիալական հարաբերությունների տվյալ վիճակի ուսումնասիրությունը Լենինը անբաժանելի էր համարում դասակարգային պայքարի գործնական խնդիրներից։ Նա ընդգծում էր, որ իսկական հասարակական գիտության, այդ թվում նաև պատմության, սոցիալական ֆունկցիան, «ուղղակի խնդիրն է՝ պայքարի ճշմարիտ լոզունգ տալ»[1]։

Պատմությունը Լենինի համար պայքարի միջոց էր. որպես գիտություն սոցյալը շաղկապելով ներկայի հետ, պատմությունը միաժամանակ ամուր հենարան էր ամբողջ աշխարհում ճնշումն ու շահագործումը վերացնելու, ճարդկային հասարակության առաջադիմության վեհ գաղափարները կյանքում իրականացնելու նպատակով մղվող պայքարի ստրատեգիան մշակելու համար։

Մեծ Հոկտեմբերի հաղթանակից հետո, ցույց տալով հեղափոխության ձեռք բերած հիմնական նվաճումները և խոսելով պատմության հեռանկարների մասին, Լենինը գրում էր. «Կապիտալիզմի և նրա հետքերի ոչնչացումը, կոմունիստական հասարակարգի հիմքերի հաստատումը կազմում է համաշխարհային պատմության այժմ սկսված նոր դարաշրջանի բովանդակությունը»[2]։

* * *

Պատմական գիտելիքների բնագավառում հսկայական էրուդիցիայի տեր լինելով, Լենինը կոնկրետացրեց պատմական գիտության մարքսիստական տեսությունը, պաշտպանեց սոցիալական առաջընթացի սկզբունքային պրոբլեմների զարգացման գիտական հիմքերը։ Նա ցույց տվեց, որ պատմական անցյալը, պատմական փորձը այն նյութն է, որին տիրապետելով միայն կարելի է տեսնել նորը։

Լենինը արտակարգ մեծ նշանակություն էր տալիս պատմական իմացության մեթոդոլոգիական կողմին։ Ի հակադրություն բուրժուական պատմափիլիսոփայական դպրոցների միստիկական կամ սուբյեկտիվ-իդեալիստական ուղղությունների, նա իր աշխատություններում ելնում էր պատմական իրակա-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, էջ 417—418։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 491։

նության օբյեկտիվ ուսումնասիրությունից։ Լենինի դիալեկտիկա-մատերիալիստական մոտեցումը պայմանավորված էր այն բանով, որ նա հենց սկզբից Մարքսի տեսությունն ընդունեց որպես գործողության ուղեցույց, որպես հասարակության պատմական զարգացման պրոցեսի իմացության միակ դիտական մեթոդ։ Ավելին, նա ստեղծագործաբար հարստացրեց մարքսիստական պատմական տեսությունը՝ մշակելով նրա մի շարք մեթոդոլոգիական հարցերը։

Լենինը գտնում էր, որ միայն գիտական պատմության մեջ կարելի է «միակ մարքսիստական հիմնավորումը տալ մեր բոլոր որոշումներին»[3]։ Ուստի և բնական է, որ նա իր հզոր տաղանդը ի սպաս դրեց պատմության գիտական մեկնաբանման գործին։ Պատահական չէ, որ Լենինի գիտական ժառանգությունն այնքան լայնորեն օգտագործվում է մարքսիստ պատմաբանների կողմից, քանի որ նրա երկերը հսկայական նյութ են պարունակում ընթացիկ հարյուրամյակի առաջին քառորդի կարևորագույն սոցիալ-տնտեսական տեղաշարժերը բնորոշելու համար։ Այդ երկերը, միաժամանակ, սկզբունքային մեթոդոլոգիական ցուցմունքներ են ընձեռում՝ մարքսիստական տեսակետից պատմագրությանը մոտենալու հարցում։ Լենինի այնպիսի աշխատությունները, ինչպիսիք են՝ «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում», «Ագրարային հարցը Ռուսաստանում XIX դարի վերջում», «Սոցիալ-դեմոկրատիայի ագրարային ծրագիրը 1905—1907 թթ. ռուսական առաջին հեղափոխության ժամանակ», «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն փուլ», «Պետություն և հեղափոխություն» և այլն, հանդիսանում են ոչ միայն տեսական մտքի մի հարուստ շտեմարան, առանց որի անհնար է պատմական գիտության արդյունավետ զարգացումը, այլև կոնկրետ-պատմական ուսումնասիրության փայլուն օրինակներ։

Իր բոլոր պատմական հետազոտություններում Լենինը հետևում էր պատմության մատերիալիստական ըմբռնմանը, որը, նրա խոսքերով ասած, «Կապիտալի» ժամանակներից ի վեր դարձել է «հասարակական գիտության հոմանիշը»։ Նա նշում էր, որ չկա հասարակության զարգացման մի այլ տեսություն, որը «ճիշտ նույնպես կարողանար կարգ մտցնել «համապատասխան փաստերի» մեջ, ինչպես կարողացավ այդ անել մատերիալիզմը»[4]։

Իր առաջին իսկ աշխատություններում Լենինը խստորեն սահմանազատում է գիտական-մարքսիստական պատմագրությունը ոչ գիտական, նախամարքսյան պատմագրությունից, վերջինիս հակագիտականության հիմքը համարելով նախ և առաջ նրա իդեալիզմը։ Պատմական պրոցեսի տեսության նախամարքսյան ներկայացուցիչները,— ասում էր Լենինը,— չէին ընդունում հասարակության զարգացման նյութական տնտեսական հիմքերը, անկարող էին զանազանել պատմական կարևոր, վճռական և երկրորդական երևույթները, որի հետևանքով անխուսափելիորեն գլորվում էին սուբյեկտիվիզմի դիրքը և պատմական դեպքերի վերլուծությունը նենգափոխում «նրանց նկարագրությամբ, հում նյութի հավաքումով»։ Նկատի ունենալով հիմնականում սուբյեկտիվիստներին, Լենինը նշում էր, որ այդ պատմաբաններն ու սոցիոլոգները «...ճանաչելով պատմական երևույթների օրինաչափությունը, ի վիճակի չէին, սակայն, նրանց էվոլյուցիային նայելու իբրև բնապատմական պրոցեսի և ի վիճակի չէին հենց

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 27, էջ 87։
4 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, էջ 163։

այն պատճառով, որ կանգ էին առնում մարդու հասարակական գաղափարների և նպատակների վրա, չկարողանալով այդ գաղափարներն ու նպատակները հանգեցնել հասարակական նյութական հարաբերությունների»[5]։

Բազմաթիվ առիթներով ընդգծելով Նախամարքսյան պատմագրության և սոցիոլոգիայի հակադիտականությունը, որ հետևանք էր նրանց ներկայացուցիչների մեթոդոլոգիական ու դասակարգային սահմանափակության, Լենինը միաժամանակ հեռու էր այդ պատմագրության նվաճումները առ ոչինչ համարելուց։ Ավելին, նա համոզված էր, որ XVIII դարում և XIX դ. առաջին կեսին, երբ բուրժուազիան ամբողջովին վերցրած դեռևս պրոգրեսիվ դասակարգ էր, նրա ներկայացուցիչները զգալի դրական ավանդ մուծեցին պատմական գիտության զարգացման գործում։ Այդ պարզ երևում է այն վերաբերմունքից, որ իր տարբեր գործերում Լենինը ցույց է տալիս XVIII դ. բուրժուական գաղափարախոսության կամ XIX դ. 40—60-ական թթ. ռուս լուսավորիչների ու հեղափոխական դեմոկրատների նկատմամբ[6], որոնց նվաճումներից խորշելը, նրա կարծիքով, կնշանակեր դավաճանել մարքսիզմին և մատերիալիզմին[7], քանի որ մարքսիզմը անանցանելի վիհով բաժանված չէ նախորդ դարերի կուլտուրայից, այլ «հանդիսանում է Եվրոպայի ամբողջ պատմական, թե՛ տնտեսական, թե՛ փիլիսոփայական գիտության բարձրագույն զարգացումը»[8]։

Հարկ է նշել, որ այս կարգի դատողությունները Լենինին երբեք չխանգարեցին ընդգծելու այն արմատական տարբերությունը, որ գոյություն ունի պատմական պրոցեսի բուրժուական և մարքսիստական մեկնաբանությունների միջև։ Ամենացցուն և հակիրճ ձևով այդ տարբերությունը տրված է նրա «Կարլ Մարքս» հոդվածում. «Մարքսիզմը մատնանշեց հասարակական-տնտեսական ֆորմացիաների ծագման, զարգացման և անկման պրոցեսի համապարփակ, ամենակողմանի ուսումնասիրության ուղին, քննելով բոլոր հակասական տենդենցների ամբողջությունը, հանգեցնելով դրանք հասարակական տարբեր դասակարգերի կյանքի և արտադրության ճիշտ որոշելի պայմաններին, վերացնելով սուբյեկտիվիզմն ու կամայականությունն առանձին «գլխավոր» իդեաների ընտրության կամ նրանց մեկնաբանման մեջ, բացահայտելով անխտիր բոլոր իդեաների և բոլոր տարբեր տենդենցների արմատները նյութական արտադրողական ուժերի կացության մեջ»[9]։ Եվ եթե նախամարքսյան ժամանակաշրջանի սոցիոլոգներն ու պատմաբանները լավագույն դեպքում կարող էին տալ պատմական պրոցեսի առանձին կողմերի նկարագրությունը, ապա Մարքսը կարողացավ մատնանշել «պատմության, որպես միասնական, իր ամբողջ վիթխարի բազմակողմանիությամբ ու հակասականությամբ օրինաչափ մի պրոցեսի, գիտական ուսումնասիրության ուղին»[10]։

Այսպես բնութագրելով պատմական մատերիալիզմի տեսության ստեղծման շնորհիվ հասարակական գիտությունների բնագավառում կատարված հեղաշրջումը, Լենինը դրանով իսկ որոշեց այն սահմանագիծը, որ բաժանում է

5 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, էջ 160։

6 Տե՛ս, օրինակ, Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 2, էջ 654, հատ. 18, էջ 13—14, հատ. 20, էջ 245—246, հատ. 21, էջ 59—60, հատ. 25, էջ 530—531։

7 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 272։

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 246։

9 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 57։

10 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 58։

պատմագրության ոչ գիտական փուլը նրա գիտական, մարքսիստական փուլից, միաժամանակ տալով պատմական գիտության պատմության պարբերացումը։

Պատմության մատերիալիստական ըմբռնումը, որ բոլոր երկրների մարքսիստ-պատմաբանների ուսումնասիրությունների տեսական հիմքն է, իր շատ կողմերով, հատկապես կուռ տրամաբանությամբ և հետևողական մեթոդոլոգիայով, հրապուրում է անգամ բազմաթիվ ժամանակակից բուրժուական պատմաբաններին։ Միաժամանակ, ինչպես նշում է մարքսիզմի բուրժուական քննադատներից մեկը, պատմության մատերիալիստական ըմբռնումը իր ստեղծման պահից «ոչ մարքսիստական և հակամարքսիստական մտածելակերպը բնութագրում է ավելի մեծ չափով, քան այդ կցանկանային ըմբռնել դրանց ներկայացուցիչները»[11]։

Մարքսիզմի որոշ կողմերի «ընդունումը» զուգորդելով նրա անսանձ քննադատությամբ, բուրժուական հասարակական միտքը ստեղծում է բազմաթիվ ու բազմատեսակ արհեստական պատմական սխեմաներ, որոնք կոչված են «վեր բարձրանալու» մարքսիզմի «թերություններից» և դրանով իսկ ժխտելու պատմական մատերիալիզմը՝ որպես պատմագրության տեսական հիմք։ Որ առաջ այդպիսի խնդիր է դնում, օրինակ, Ռոստոուն, որը «տնտեսական աճի» իր ստեղծած հինգ փուլերով փոխարինում է պատմության մեջ ռեալ գոյություն ունեցող արտադրաեղանակները և սոցիալ-տնտեսական ֆորմացիաները, ճգնելով համոզել, թե «աճի տեսությունը» հանդիսանում է «նոր պատմության մարքսիստական մեկնաբանության ալտերնատիվը»[12]։

Սոցիալիզմի հաղթանակը, մարքսիզմ-լենինիզմի հաղթարշավը բուրժուական տեսաբաններին ու պատմաբաններին ստիպում է ավելի ու ավելի կատարելագործել պայքարի՝ հնուց գոյություն ունեցող տակտիկան. «մարքսիզմը սպանել մեղմության միջոցով», «խեղդել գրկախառնության միջոցով», առերես ընդունելով մարքսիզմի «բոլոր» կողմերն ու տարրերը, բացառությամբ նրա «ագիտատորական», «դեմագոգիկ», «բլանկիստական-ուտոպիական» կողմերի, այսինքն՝ պատմության մատերիալիստական ըմբռնման և պրոլետարիատի դիկտատուրայի մասին մարքսիստական ուսմունքի[13]։

Պատմագրության բնագավառում մղվող ժամանակակից գաղափարական պայքարը հրամայաբար պահանջում է հաշվի առնել բուրժուական հեղինակների տակտիկայի՝ Լենինի նշած այս առանձնահատկությունները։ Ինքը՝ Լենինը տվել է պատմական գիտության մարքսիստական մեթոդոլոգիական հիմքերի

---

[11] K. Löwith. Von Hegel zu Nietzsche. Stuttgart, 1964. էջ 17։

[12] Տե՛ս W. W. Rostow. The Stages of Economic Growth. Cambridge, 1960, էջ 2 և հաջ.

[13] Մարքսիզմը «լավացնելու», նրա «հնացած» կողմերը շտկելու փորձեր կատարել ու կատարում են ոչ միայն բուրժուական պատմաբաններն ու սոցիոլոգները, այլև այնպիսի տեսաբաններ, որոնք իրենց համարում են սոցիալիստներ ու անգամ կոմունիստներ։ Ինչպես հայտնի է, գերմանական ու ավստրիական սոցիալ-դեմոկրատների պարագլուխները, այդ գործը սկսելով գեռևս տխրահռչակ Բերնշտայնի օրոք, ի վերջո հանգեցին այն բանին, որ ոչ հեռավոր անցյալում ավստրիական «սոցիալիստ» Ռեննների բերանով ի լուր աշխարհի պաշտոնապես հայտարարեցին, որ տեսական հարցերում և պրակտիկ աշխատանքում իրենց կուսակցությունը դադարում է մարքսիզմը գործողության ծրագիր ու հիմք համարելուց։ Ըստ էության նույն երևույթին ենք մենք ականատես նաև եվրոպական ու ասիական մի քանի այլ երկրներում, որտեղ մարքսիզմի ոգեղիան աջից ու «ձախից» բարձրացված է պետական ու կուսակցական ծրագրի աստիճանին։

բուրժուական նենգափոխման քննադատության բազմաթիվ փայլուն օրինակներ։

Դեռևս իր գործունեության արշալույսին Լենինը ջախջախիչ քննադատության ենթարկեց նարոդնիկական սոցիոլոգիան, որի ներկայացուցիչներ Միխայլովսկին, Յուզովը, Կարեևը, Յուժակովը և ուրիշներ պաշտպանում էին մարքսյան մատերիալիզմի և երիտասարդ հեգելականների սուբյեկտիվ իդեալիզմի էկլեկտիկ խառնուրդից ստեղծված տեսակետներ։ Պատմության իմացությունը նրանք հաճախ հանգեցնում էին պատմության «օբյեկտի և սուբյեկտի հավասարակշռության հատուկ դեպքերը» որոշելուն։ «Դրական գիտությունը,— գրում էր Միխայլովսկին,— գործ չունի մեր հասկացությունների բոլոր սուբստանցիաների և դրանց համապատասխանող ճշմարտացիության չափանիշների հետ... Կարևորը միայն այն է, որ մեր իմացությունը բավարարի մարդկային բնության պահանջներին, և ճշմարտայիության չափանիշը պետք է որոնել հենց այդ բավարարության մեջ»[14]։

Նարոդնիկական սոցիոլոգիայի հիմքում տրված «Ես-ի և ոչ-Ես-ի» այս ֆորմուլան միաժամանակ դիտվում է որպես մեթոդի հարցի լուծում։ Հանդես գալով այդպիսի տեսակետների քննադատությամբ, Լենինը «նարոդնիկության տնտեսական բովանդակությունը...» աշխատության մեջ բացահայտեց հասարակության կյանքի ուսումնասիրության սուբյեկտիվ-իդեալիստական այդ մոտեցման էությունը՝ գրելով. «Հոչակավոր «սուբյեկտիվ մեթոդը սոցիոլոգիայում» վճռապես ոչինչ չի արտահայտում, բացի լավ ցանկությունից ու վատ իմբոնողությունից»[15]։

Պատմական մատերիալիզմի մեթոդոլոգիական հսկայական նշանակությունը շեշտելու նպատակով Լենինը սոցիոլոգիան համեմատում է բնագիտության հետ և ցույց է տալիս, որ հասարակության և պրոցեսի մասին բուրժուական սոցիոլոգների վերացական դատողությունները հիշեցնում են մարդկային մտածողության նախագիտական վիճակը։ Նա գրում է. «Քանի դեռ չէին կարողանում ձեռնարկել փաստերի ուսումնասիրությանը, միշտ հորինում էին a priori ընդհանուր թեորիաներ, որոնք միշտ անպտուղ էին մնում»[16]։

«Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» գրքում Լենինը տվեց էմպիրիոկրիտիցիզմի պոզիտիվիստական սոցիոլոգիական կոնցեպցիայի քննադատությունը, մի կոնցեպցիա, որը, մարքսիզմի «ճշտման» քողի տակ, պաշտպանում էր Բոգդանովը[17]։

Ինչպես իր այդ գրքում, այնպես էլ հետագա աշխատությունների մեջ, մասնավորապես «Փիլիսոփայական տետրերում», Լենինը գիտական խստագույն քննադատության ենթարկեց իմպերիալիզմի դարաշրջանի բուրժուական պատմագրությունը, որի զգալի մասի փիլիսոփայական ելակետը սուբյեկտիվ՝ իդեալիզմի տարբեր տեսակներն են և առաջին հերթին՝ նոր կանտականությունը[18]։ Առանց սուբյեկտիվ-իդեալիստական փիլիսոփայական սիստեմների

---

14 К. Н. Михайловский. Сочинения, հատ. III, СПб, 1897, էջ 347։

15 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, էջ 513։

16 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, էջ 165։

17 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 14, էջ 431—443։

18 Այս առթիվ տե՛ս А. Н. Данилов. К вопросу о критике буржуазной историографии в произведениях В. И. Ленина. «Средние века», вып. 18, М., 1960, էջ 9 և հտ.; В. К. Яцунский. Приемы научного исследования в работах В. И. Ленина по со-

լենինյան քննադատության մեթոդների լայն օգտագործման, առանց արտագոլման լենինյան տեսության խոր ուսումնասիրման, ներկայումս անհնար է հաջողությամբ պաշտպանել պատմական գիտության մարքսիստական մեթոդոլոգիական սկզբունքները, քանի որ այդ տեսությունը մարքսիստ-պատմաբանի կարևորագույն զենքն է բուրժուական պատմագրության դեմ, հանուն պատմության մատերիալիստական ըմբռնման մղվող պայքարում։

* * *

Պատմական իմացությունը իմացության այլ ձևերից տարբերվում է իր որոշակի առանձնահատկություններով։ Պատմական գիտության ուսումնասիրության օբյեկտն ինքը պարզորոշ ցույց է տալիս, որ պատմական տեսությունը անհամեմատ ավելի բարդ է, քան այլ գիտությունների տեսությունները[19]։

Պատմական գիտակցությունը միշտ էլ հասարակական գիտակցության մի մասն է, և իբրև այդպիսին նա, արտացոլելով հասարակական կեցությունը, միաժամանակ արտացոլում է հասարակական գիտակցության պատմությունը։ Ոչ մի դարաշրջանում պատմական իմացությունը գոյություն չի ունեցել դասակարգերի և նրանց գաղափարախոսությունների միջև մղվող պայքարից դուրս և անկախ։ Բացի այդ, հենց միայն այն պատճառով, որ հասարակության ներկա վիճակը անբաժանելի է նրա պատմական անցյալից, գաղափարական-քաղաքական պայքարի մասնակիցները անհրաժեշտաբար ստիպված են լինում մշակել պատմության նկատմամբ իրենց որոշակի վերաբերմունքը։ Դրանով իսկ ձևավորվում է պատմական որոշակի գիտակցություն։

Եթե անցյալի իմացությունը, իր ամենաընդհանուր ձևով, կյանքի է կոչվում սոցիալական իրականության հրամայական պահանջի շնորհիվ, ապա այդ անցյալը ճանաչելու սկզբունքները մշակվում ու հղկվում են ըստ այն դասակարգի հասարակական տեղի ու դերի, որը դիմում է ճանաչողական տվյալ սկզբունքներին։ Որ հասարակական գիտությունները դասակարգային հասարակության մեջ չեն կարող դասակարգերի շահերից հեռու մնալ, այդ ցույց է տվել Լենինը դեռևս հեղափոխությունից առաջ, գրելով. «Ամբողջ կազմոնի և լիբերալ գիտությունը պաշտպանում է վարձու ստրկությունը... Վարձու ստրկության հասարակության մեջ անաչառ գիտություն սպասելը... հիմար միամտություն է»[20]։

Ինչքան մեծանում է ուսումնասիրությունների ծավալը, ինչքան բարդանում են ուսումնասիրելիք պրոբլեմներն ու երևան գալիս վերլուծության նոր, կոնկրետ մեթոդներ, այնքան ավելի է մեծանում իմացության սկզբունքների նշանակությունը պատմական գիտության մեջ։ Պատահական չէ, որ բուրժուական պատմագրության մեթոդոլոգիական ճգնաժամը հանդես է գալիս որպես

циально-экономической истории. «История СССР», 1960, № 2, էջ 29 և հտ.; И. И. Смирнов. Некоторые вопросы методологии исторического исследования в трудах В. И. Ленина. «Вопросы историографии и источниковедения истории СССР», вып. 5, Л., 1963, էջ 42 և հտ.; В. П. Федотов. В. И. Ленин и исторический материализм. Конец XIX—нач. XX в., Л., 1960.

19 Այս հարցի կապակցությամբ տե՛ս А. И. Уваров. Структура теории в исторической науке. «Методологические и историографические вопросы исторической науки», вып. 3, Томск, 1965, էջ 35 և հտ.։

20 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 19, էջ 3։

պատմական իմացության տեսական սկզբունքների ճգնաժամ և այդ պատճառով ստանում է իմացաբանական բնույթ[21]։

Մարքսիզմ-լենինիզմի համար տեսական-իմացաբանական բոլոր հարցերի լուծման հիմք է հանդիսանում արտացոլման տեսությունը։ Ընդգծելով այդ հանգամանքը, Լենինը գրում էր. «Մատերիալիզմն առհասարակ ճանաչում է օբյեկտիվորեն ռեալ գոյը (մատերիան), որն անկախ է մարդկության գիտակցությունից, զգայությունից, փորձից և այլն։ Պատմական մատերիալիզմը հասարակական կեցությունն անկախ է ճանաչում մարդկության հասարակական գիտակցությունից։ Գիտակցությունը թե այնտեղ և թե այստեղ միայն արտացոլումն է կեցության, լավագույն դեպքում նրա մոտավորապես ճիշտ (ադեկվատ, իդեալականորեն-ճշգրիտ) արտացոլումը»[22]։

Իմացաբանական տեսանկյունով դիտվող պատմական գիտությունը հանդիսանում է հասարակական կեցության զարգացման արտացոլումը, միաժամանակ՝ նաև հասարակական գիտակցության զարգացման արտացոլումը։ Պատմական իմացության պրոցեսում ստացվող եզրակացությունների ճշմարտացիությունը կախված է այն բանից, թե պատմական պրոցեսներն ու երեվույթները որքան ադեկվատ են արտացոլված պատմաբանների մշակած հասկացություններում։ «Արտացոլումը,—գրում էր Լենինը,—կարող է լինել արտացոլվողի մոտավորապես ճիշտ պատճենը, բայց անհեթեթություն է այստեղ նույնության մասին խոսելը»[23]։

Այն հանգամանքը, որ մարքսիզմի երևան գալով հեղաշրջում կատարվեց պատմագրության մեջ, ոչ մի դեպքում չի նշանակում, թե պատմագրության զարգացման նախորդ ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում ձեռք բերված փաստական հսկա նյութը մի կողմ շպրտվեց։ Ընդհակառակը, պատմության մատերիալիստական ըմբռնումը թույլ տվեց համաձուլել պատմական բոլոր օբյեկտիվ և բացարձակ ճշմարտացի գիտելիքները. անցյալի դրական արդյունքները չէին կարող հենարան չհանդիսանալ պատմական տեսությունը զարգացման որակապես մի նոր աստիճանի բարձրացնելու համար։

Իր բնույթով պատմական գիտությունը թշնամի է դոգմատիզմին ու ռելյատիվիզմին, քանի որ դրանցից առաջինը միշտ էլ ծառայել է ջատագովական նպատակների, իսկ երկրորդը, վերջին հաշվով, ժխտում է պատմության՝ որպես գիտության գոյությունը։

Վ. Ի. Լենինը մեծ նշանակություն էր տալիս գիտության զարգացման գործում դոգմատիզմի և ռելյատիվիզմի վնասակար ազդեցությունը մերկացնելուն։ Մասնավորապես ռելյատիվիզմի մասին նա գրում էր, որ եթե այդ սկզբունքը դրված է իմացության տեսության հիմքում, ապա նա գիտական միտքը հանգեցնում է ագնոստիցիզմի կամ սուբյեկտիվիզմի[24]։ Այդ սկզբունքի ոչ մի բացարձակացում չի կարող լինել, իսկ եթե մարքսիստական ուսմունքի մեջ խոսվում է ռելյատիվիզմի մասին, ապա միայն այն պատճառով, որ մարքսիզմը «մեր բոլոր գիտելիքների հարաբերականությունը ճանաչում է ոչ թե օբյեկտիվ ճշմարտության բացասման իմաստով, այլ մեր գիտելիքներն այդ ճշմարտու-

---

21 Այս առթիվ տե՛ս Н. С. Кон. Философский идеализм и кризис буржуазной исторической мысли, М., 1959, էջ 225 և հտ.։

22 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 14, էջ 436—437։

23 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 14, էջ 433։

24 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 14, էջ 171։

թյանը մոտենալու սահմանների պատմական պայմանականության իմաստով[25]։

Այսօրվա բուրժուական պատմական գիտության մեջ ռելյատիվիզմը կոչված է թաքցնելու պատմական պրոցեսի հիմնական օրինաչափությունները, թուլացնելու այն օբյեկտիվ եզրակացությունների նշանակությունը, որոնց հանգում է գիտությունը՝ հասարակության զարգացման ուղիների հետևողական դիալեկտիկա-մատերիալիստական լուսաբանման շնորհիվ։ Այստեղ է թաքնված այն երևույթի պատճառը, որ մոտավորապես XX դարի սկզբներից սկսած, իմպերիալիզմի փուլի երևան գալու պահից ի վեր, սկսեցին առաջանալ ու տարածվել տարբեր տիպի ռելյատիվիստական կոնցեպցիաներ։ Սակայն պատմության փիլիսոփայության բուրժուական ներկայացուցիչները, չբավարարվելով ռելյատիվիզմով, փորձում են ժխտել նաև մարդու գիտակցության մեջ օբյեկտիվ աշխարհի արտացոլման մատերիալիստական դրույթը և գործը այնպես են պատկերացնում, թե պատմական գիտության մեջ իբր անհնար է սահմանազատել իմացության օբյեկտիվ և սուբյեկտիվ ձևերը։ Ահա թե ինչն է պատճառը, որ պատմական իմացության մեջ սուբյեկտի և օբյեկտի «համընկնելու» թեզը այնքան տարածված է արևմտյան բուրժուական պատմա-փիլիսոփայական գրականության մեջ։

Ճշմարտությունն այն է, որ անցյալի ճանաչումը ոչ թե օբյեկտի և սուբյեկտի համաձուլումն է, ոչ թե սուբյեկտի հաստատումն է՝ որպես առաջնային ու կարգավորիչ ֆակտոր, ինչպես ենթադրում են Հայդեգերն ու Յասպերսը[26],— այլ մի այնպիսի ճանաչում է, որը, փաստորեն, ուսումնասիրողի («սուբյեկտի») ակտիվ փոխազդեցությունն է իրենից անկախ «օբյեկտի» հետ։ Հենց այդ ակտիվ փոխազդեցությունն էլ հանդիսանում է պրակտիկան, որը վկայում է աշխարհը ճանաչող և վերափոխող սուբյեկտի կուտակած գիտելիքների ճշմարտացիությունը։

Պատմական ճշմարտությունը դա այն պատմական ռեալականությունն է, որն արտացոլված է ուսումնասիրողի կոնցեպցիաներում. իր բովանդակությամբ նա օբյեկտիվ է այն իմաստով, որ ըստ ինքյան անկախ է ուսումնասիրողից։ Մարքսի ուսմունքը, ասում է Լենինը, ամբողջովին ներծծված է ճշմարտության օբյեկտիվության ընդունումով[27]։

Ճիշտ այսպես էլ Լենինը բացահայտում է պատմության մեջ օրենքի օբյեկտիվ բովանդակությունը, այս հարցում ելնելով Մարքսի այն դրույթից, թե «յուրաքանչյուր ընդհանրական օրենք միշտ իրականանում է մի շատ խճճված ու մոտավոր եղանակով միայն, որպես մշտնջենական տատանումների միջին, ...լոկ որպես տիրապետող տենդենց»[28]։ Պատմության զարգացման օրինաչափ պրոցեսի պատկերը բացահայտում են այն հասկացությունները, որոնք ըստ ինքյան հանդիսանում են իրականության արտացոլման ձևերը։ Հասարակական գիտությունը, հենվելով իմացության տեսության վրա, չի կարող աբստրակտ կերպով քննել մտածողության իրական կամ ոչ իրական լինելը։ Սոցիալական պրակտիկան, որ իր մեջ միավորում է զգայական հայեցողության անմիջական

25 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 14, էջ 172։
26 Տե՛ս Г. Менде. Очерки о философии экзистенциализма, М., 1958, էջ 41։
27 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 14, էջ 150—163։
28 Կ. Մարքս, Կապիտալ, հատ. 3, մաս I, էջ 141։

հավաստիությունը և աբստրակտ մտածողության համընդհանրությունը, հանդիսանում է ճշմարտացիության բարձրագույն չափանիշը. «Կյանքի, պրակտիկայի տեսակետը պետք է լինի իմացաբանության առաջին և հիմնական տեսակետը»[29],— որում է Լենինը։ Սակայն մարքսիզմ-լենինիզմը այդ պրակտիկայի մեջ մետաֆիզիկական-բացարձակ իմաստ չի դնում. պրակտիկան, դրում է Լենինը, «բնավ չի կարող ըստ էության լիակատար կերպով հաստատել կամ հերքել որևիցէ մարդկային մտապատկեր։ Այդ կրիտերիան ևս այնքան «անորոշ» է, որ թույլ չի տալիս մարդկային գիտելիքներին դառնալ «բացարձակ», և միևնույն ժամանակ այնքան որոշ է, որ անխնա պայքար է մղում իդեալիզմի և ագնոստիցիզմի բոլոր տարատեսակությունների դեմ»[30]։

Եթե անցյալի սոցիալ-տնտեսական ողջ պրակտիկան հաստատում է պատմության մարքս-լենինյան ըմբռնման և պատմական զարգացման՝ մարքսիզմի հայտնաբերած օրենքների ճշմարտացիությունը, ապա դրանից ամենևին էլ չի հետևում, թե պատմական գիտության մեջ ճշմարտացիության չափանիշի յուրահատկության հարցը պատմաբանների համար էական նշանակություն չունի։ Ընդհակառակը, այդ հարցը ակտուալ է մնում նախ այն պատճառով, որ Մարքսի ու Լենինի ոգով նրա լուծումը հնարավորություն է տալիս դեն նետել պրակտիկայի նկատմամբ պրագմատիստական տեսակետը. բացահայտել պատմությունը փիլիսոփայության հետ նույնացնելու կամ պատմական իմացության պատմությամբ իրական պատմությունը նենգափոխելու փորձերի հակագիտական էությունը։ Այնուհետև, այդ հարցի լուծումը լույս է սփռում այն խնդրի վրա, թե պատմական իմացության, պատմական գիտության զարգացումը ինչպես է մտնում հասարակական-պատմական պրակտիկայի մեջ։

Մարքս-լենինյան արտացոլման տեսությունը պատմական իմացության հիմքն է ու փորձված զենքը։ Հանդիսանալով մարդկային իմացության ողջ փորձի արդյունքների գիտական ընդհանրացումը, նրա սկզբունքները հնարավորություն են տալիս ավելի ու ավելի խոր և հանգամանորեն ուսումնասիրել հասարակական-պատմական գործունեությունը։ «Գնալով մարքսյան թեորիայի ուղիով,— ասում էր Լենինը,— մենք ավելի ու ավելի ենք մոտենալու օբյեկտիվ ճշմարտությանը (երբեք չսպառելով այն). իսկ գնալով ամեն մի այլ ուղիով, մենք չենք կարող հասնել ոչ մի բանի, բացի խառնաշփոթությունից ու կեղծիքից»[31]։

Մարքսիստական պատմագրության մեջ պատմական ուսումնասիրությունների ժամանակ արտացոլման տեսության սկզբունքների կիրառումը ոչ մի ընդհանուր բան չունի պատմական զարգացման ապրիորի սխեմաներ ստեղծելու հետ, որոնց համաձայն սկզբնաղբյուրներից քաղվում են «համապատասխան օրինակներ»։ Մարքսիստ պատմաբանի համար արտացոլման տեսության կիրառումը ենթադրում է քննարկվող օբյեկտի ուսումնասիրումը՝ նրա կոնկրետ դրսևորումների ողջ բազմազանության մեջ, նրա բոլոր կապակցությունների ուսումնասիրումը, նպատակ ունենալով «ճիշտ ու ճշգրիտ պատկերացնել իրական պատմական պրոցեսը»[32]։

---

29 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 14, էջ 179։
30 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 14, էջ 179—180։
31 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 14, էջ 180։
32 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, էջ 193։

Պատմական գիտությունը գործ ունի հասարակական զարգացման օրինաչափությունների այնպիսի ձևերի ու այնպիսի տարածական ու ժամանակային կապակցությունների ու հարաբերությունների հետ, որոնք ներհատուկ են պատմական օբյեկտիվ պրոցեսին։ Հենց այս պատճառով էլ պատմական գիտությունը ուսումնասիրում է ոչ թե հասարակության զարգացման օրենքների սիստեմը՝ իբրև այդպիսիք, այլ գործ ունի կոնկրետ-պատմական պայմաններում այդ օրենքների դրսևորման հետ, երբ երևան են գալիս տվյալ պայմանների հատուկ պատահականություններն ու զարգացման զիգզագները, այսինքն՝ պատմական պրոցեսի այն ողջ հակասականությունը, որը ներառնում է ոչ միայն առաջընթաց շարժումը, այլև հետադարձ ընթացքը, ռեակցիան։ Պատմաբանը չի կարող տալ տվյալ դարաշրջանի օբյեկտիվ պատկերը, առանց ցույց տալու էպոխայի բոլոր զիգզագները, կատարվող դեպքերի յուրահատկությունը, առանց բացահայտելու ոչ միայն պատմության այս կամ այն օրենքը, այլև առանց ցույց տալու այն բոլոր երևույթների կոմպլեքսը, որոնք օժանդակում են դարաշրջանի հիմնական տենդենցի առաջընթացին կամ արգելակում են այն։ Հակառակ դեպքում նրա ուսումնասիրությունը վերջին հաշվով կստացվի սխեմատիկ, լավագույն դեպքում՝ քննարկվող դեպքերի և պրոցեսների թույլ ու անկատար արտացոլում։

Լենինը ոչ միայն խորացրեց արտացոլման մարքսիստական տեսությունը, այլև, ձևակերպելով պատմական իմացության տեսության սկզբունքային հիմունքները, հանճարեղ ուսումնասիրողի չգերազանցված վարպետությամբ իր աշխատությունների մեջ տվեց սկզբնաղբյուրների ընտրության, դասակարգման և օգտագործման փայլուն օրինակներ, պատմական փաստերի լուսաբանումը կապելով հասարակության կյանքի կոնկրետ պայմանների հետ, սոցիալական երևույթների մեկնաբանությունը տալով այնպիսի հասկացությունների միջոցով, որոնք իրենց մեջ արտացոլում և ամրապնդում են պատմական օբյեկտի գիտական իմացությունը[33]։ Այն սկզբունքները, որոնց հետևում էր Լենինը, նրա կողմից ձևակերպված են սպառիչ լիակատարությամբ. «Մարքսիզմի ամբողջ ոգին, նրա ամբողջ սիստեմը պահանջում է, որ յուրաքանչյուր դրույթ դիտվի միայն (α) պատմականորեն. (β) միայն մյուսների կապակցությամբ. (γ) միայն պատմության կոնկրետ փորձի կապակցությամբ»[34]։

* * *

Մեր օրերում, երբ աննախադեպ սրության է հասել համաշխարհային երկու հակադիր սիստեմների՝ սոցիալիզմի և կապիտալիզմի միջև մղվող գաղափարական պայքարը, մեծ կարևորություն է ստացել այն հարցը, թե ինչպիսի փոխհարաբերություն գոյություն ունի գիտնականի աշխարհայացքի, սրա ուսումնասիրության մեթոդի և օբյեկտիվ դերի միջև։ Այս կապակցությամբ անհրաժեշտ է անդրադառնալ կուսակցականության և օբյեկտիվիզմի փոխհարաբերության խնդրին։

Խոսելով մարքսիզմի տեսության մասին, Լենինը գրում էր. «Այս տեսության անհաղթելի դրավիչ ուժը, որով նա հրապուրում է բոլոր երկրների սո-

---

33 Այս կապակցությամբ տե՛ս М. В. Нечкина. Ленин—историк революционного движения России (в сб. «В. И. Ленин и историческая наука», М., 1968), էջ 41։

34 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 35, էջ 265։

յիալիստներին, հենց այն է, որ նա միացնում է խիստ ու բարձրագույն գիտականությունը (հանդիսանալով հասարակական գիտության վերջին խոսքը) հեղափոխականության հետ և միացնում է ո՛չ թե պատահաբար, այլ... ներքնապես ու անխզելիորեն»[35]։ Բազմաթիվ առիթներով նա ցույց է տվել, որ իր ուսումնասիրությունների ժամանակ պատմաբանը չի կարող չկանգնել այս կամ այն դասակարգի կողմը, միաժամանակ ընդգծելով, որ իր էությամբ բուրժուական օբյեկտիվիզմը հանդիսանում է «դասակարգային պայքարի քողարկում և մթագնում»[36]։

Այս կապակցությամբ արժե վերհիշել Լենինի կարծիքը հայտնի ռուս լիբերալ պատմաբան Միլյուկովի մասին։ Համարելով նրան «ամենից ավելի գիտակ պատմաբաններից մեկը», Լենինը բնորոշում է Միլյուկովին որպես սնանկ գիտնականի։ Քաղաքական կուրությունը, բուրժուազիայի համար ոչ ձեռնտու փաստերը տեսնելու ցանկության բացակայությունը Միլյուկովի համար անհնարին դարձրին իր ուսումնասիրած հարցերի գիտական, օբյեկտիվ քննարկումը[37]։

Ինչպես այստեղ, այնպես էլ բոլոր այն դեպքերում, երբ Լենինը քննադատում է բուրժուական գիտնականների օբյեկտիվիզմն ու նրանց եզրակացությունների միտումնավորությունը, ամենուրեք լենինյան քննադատության հիմքում ընկած է կուսակցականության սկզբունքը, որի շնորհիվ միայն հնարավոր է դառնում սոցիալ-քաղաքական և գիտա-պատմական վերլուծության միասնությունը։

Պատմագիտական ուսումնասիրությունների ժամանակ կուսակցականության սկզբունքի անհրաժեշտությունը Լենինը շեշտել է իր առաջին իսկ աշխատություններում։ Արդեն «Նարոդնիկության տնտեսական բովանդակությունը...» երկում նա բնութագրում է այն կուսակցականության էությունը, որով, ի հակադրություն բուրժուական օբյեկտիվիզմի, ղեկավարվում են մարքսիստ պատմաբանները։ «Օբյեկտիվիստը,— գրում է նա,— խոսում է տվյալ պատմական պրոցեսի անհրաժեշտության մասին. մատերիալիստը ճշտությամբ հավաստում է տվյալ հասարակական-տնտեսական ֆորմացիան և վերջինիս առաջացրած անտագոնիստական հարաբերությունները։ Օբյեկտիվիստն, ապացուցելով փաստերի տվյալ շարքի անհրաժեշտությունը, միշտ ռիսկ է անում դեղվելու և կանգնելու այդ փաստերը ջատագովողի տեսակետի վրա. մատերիալիստը բաց է անում դասակարգային հակասությունները և դրանով իսկ որոշում է իր տեսակետը։ Օբյեկտիվիստը խոսում է «պատմական անհաղթահարելի տենդենցների» մասին. մատերիալիստը խոսում է այն դասակարգի մասին, որը «կառավարում է» տվյալ տնտեսակարգը՝ ստեղծելով մյուս դասակարգերի դիմադրության այս-ինչ ձևերը»[38]։

Անթույլատրելի համարելով միայն արձանագրել պատմական տվյալ պրոցեսի անհրաժեշտությունը, պահանջելով բացահայտել այդ անհրաժեշտության սոցիալ-տնտեսական կոնկրետ հիմքերը և ցույց տալ այդ անհրաժեշտության հետևում կանգնած դասակարգերն ու նրանց պայքարը, Լենինը միշտ պարզ ու

35 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, էջ 417։
36 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 18, էջ 418։
37 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 16, էջ 167—177։
38 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, էջ 516։

հստակորեն արտահայտում է իր վերաբերմունքը հասարակական կյանքի փաստերի ու երևույթների տվյալ խմբի նկատմամբ։ «Մատերիալիզմը,— գրում է նա,— իր մեջ պարունակում է, այսպես ասած, պարտիականություն՝ պարտավորեցնելով դեպքի ամեն մի գնահատականի ժամանակ ուղղակի ու բացորոշ կանգնելու հասարակական որոշ խմբի տեսակետի վրա»[39]։

Ինչքան էլ որ բուրժուական պատմաբանները պարծենան իրենց օբյեկտիվությամբ ու անաչառությամբ, նրանց ուսումնասիրությունները իրենց վրա կրում են դասակարգայնության կնիքը, պատմական հեռանկարից զուրկ բուրժուազիայի դասակարգային գիտակցության կնիքը։ Այս երևույթը հատկապես աչքի է զարնում ժամանակակից բուրժուական պատմագրության մեջ։

Հարկ է նշել, որ պատմական գիտության սոցիալական պայմանավորվածության և սոցիալական ֆունկցիայի թեզը մարքսիզմի գյուտը չէ։ Դեռևս Հեգելը ծիծաղելի էր համարում պատմության «անկուսակցականության» պահանջը, նա գտնում էր, որ չի կարող այնպիսի պատմություն գրվել, որի մեջ աչառու վերաբերմունք չլինի այս կամ այն տեսակետի օգտին[40]։ Անցյալ դարի բուրժուական պատմագրության մեջ տարածված էր այն կարծիքը, թե պատմաբանի գործունեությունը նշանակալից չափով որոշվում է իր ժամանակակից քաղաքական կյանքի խթաններով։ XIX դ. համարյա բոլոր ականավոր պատմաբանները (Մակոլեյ, Կարլեյլ, Միշլե, Ձիբել, Գրանովսկի և ուրիշներ) ոչ միայն չէին թաքցնում իրենց քաղաքական համոզմունքները, այլև պատմությունը դիտում էին որպես այդ համոզմունքները պրոպագանդելու միջոց. նրանք «կուսակցական» պատմաբաններ էին՝ այդ բառի ամենախիստ իմաստով։ Լինելով քաղաքական ամենատարբեր համոզմունքների տեր և ունենալով սոցիալական տարբեր իդեալներ, նրանք անցյալին դիմում էին՝ այնտեղ իրենց տեսակետները հաստատող փաստարկներ գտնելու նպատակով։ Նրանց համար պատմական գիտելիքները ինքնանպատակ չէին, այլ դիտվում էին որպես քաղաքական ու սոցիալական որոշակի իդեալների հասնելու միջոց։ Այդ էր պահանջում նրանց ժամանակակից իրականությունը, եթե նույնիսկ ուսումնասիրության նյութը վերաբերում էր հեռավոր անցյալին։

Բուրժուական հոչակավոր «օբյեկտիվիզմը» լայնորեն տարածված էր անցյալ դարի ռուս պատմաբանների միջավայրում, և այդ էր պատճառը, որ օբյեկտիվիզմի մարքսիստական քննադատությունը այնքան կարևոր նշանակություն էր ստանում։ «Օբյեկտիվ» պատմագրության ճանաչված պարտգլուխ Ռանկեի ոգով Ն. Ի. Կարեևը գրում էր, որ պատմաբանը պետք է ազատագրվի ազգային, կրոնական և կուսակցական ամեն կարգի նախապատվությունից, որ նա պարտավոր է «մի որոշակի խմբի անդամ լինելու աստիճանից» անցնել «ամբողջ մարդկության անդամի աստիճանին, սոցիալական կյանքում այս կամ այն ֆունկցիան կատարող էակի աստիճանից՝ բազմակողմանիորեն զարգացած անձի աստիճանին»[41]։ Մի այլ խոշոր ռուս տեսաբան՝ Պ. Ստրուվեն, օբյեկտիվիստական կոնցեպցիան «հիմնավորում» էր մարքսիստական մատերիալիզմը դետերմինիզմին հակադրելու միջոցով (ըստ որում այդ վերջինը մեկնաբանում

39 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, էջ 517։

40 Տե՛ս Гегель. Сочинения, հատ. 3, էջ 330։

41 Н. И. Кареев. Основные вопросы философии истории. М., 1883, հատ. I, էջ 383—384։

իր ֆատալիստական ոգով), ինչպես նաև փորձելով ապացուցել, թե գիտական և դասակարգային, կուսակցական տեսակետները անհամատեղելի են, քանի որ նրանք իբրև թե փոխադարձաբար ժխտում են միմյանց[42]։

Հնգացիկ դարասկզբի Ռուսաստանում Կարեևն ու Ստրուվեն միայնակ չէին բուրժուական օբյեկտիվիզմի սկզբունքները հաստատելու իրենց ջանքերում. ռուս լիբերալ բուրժուազիայի պատմաբանները, նրանց հետ միասին, միասնական ճակատ էին կազմել պատմական մատերիալիզմի տեսության դեմ մղվող կատաղի պայքարում.

Բուրժուական պատմա-փիլիսոփայության այս կողմի՝ օբյեկտիվիզմի լենինյան քննադատության անհրաժեշտությունն ու նշանակությունը պայմանավորված էին նաև այն բանով, որ կուսակցականության և օբյեկտիվիզմի սկզբունքների հակադրությունը պայմաններ էր ստեղծում պատմագրության մեջ ագնոստիցիզմի տարածման համար։ Բանը նրանում է, որ ճանաչողության պրոցեսի սուբյեկտիվ բնույթի ընդունումը բուրժուական պատմաբանների կողմից համարվում էր մի հզոր փաստարկ՝ պատմության անճանաչելիությունը ապացուցելու համար[43]։ Դրա հետևանքով վճռապես մերժվում էր պատմական տերմինների, հասկացությունների ու կատեգորիաների օբյեկտիվ բովանդակությունը։

Ի հակադրություն նման պնդումների, Վ. Ի. Լենինը անհրաժեշտ էր համարում ցույց տալ, թե ինչպես Մարքսը, ուսումնասիրելով հասարակական հարաբերությունների միայն մեկ տիպը, հենց սկզբից բացահայտեց պատմական զարգացման օրենքների օբյեկտիվ բնույթը, այդ նպատակով նախապես ճշտելով այն հասկացություններն ու կատեգորիաները, որոնց միջոցով միայն հնարավոր է տալ հասարակական-պատմական երևույթների գիտական նկարագրությունը։ Պատմաբանը, ասում էր Լենինը, պարտավոր է տեսականորեն ճշգրիտ բացատրել հասկացությունները, դրանք մեխանիկորեն չհակադրել միմյանց, հատկապես այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է առանձինին ու ընդհանուրին։ Պատմաբանի խնդիրն այն չէ, որ աբսոլյուտի վերածի այդ կատեգորիաներից մեկը կամ մյուսը, այլ այն, որպեսզի կոնկրետ կերպով ուսումնասիրի դրանք՝ պարզելով ընդհանրացման (ընդհանրության) տարբեր աստիճանները, այսինքն՝ որոշի այն յուրահատուկ պատմական օրենքները, որոնք «կարգավորում են տվյալ հասարակական օրգանիզմի ծագումը, գոյությունը, զարգացումն ու մահը և նրա փոխարինվելն ուրիշ, ավելի բարձր օրգանիզմով»[44]։ Յուրաքանչյուր հասարակական օրգանիզմի կոնկրետ ձևերը կարող են բացատրվել միայն այն դեպքում, եթե պատմաբանը ելնում է նրա պատմական զարգացումից՝ ամբողջապես վերցրած, զարգացում, որը ներառնում է հասարակական երևույթների կրկնվող մոմենտները։ Այս պահանջի հաշվի չառնելը, առանձինի ու ընդհանուրի կատեգորիաներից որևէ մեկը աբսոլյուտի վերածելը (իսկ պատմության բնագավառում նրանց փոխհարաբերության պրոբլեմի լուծումը հանդիսանում է մարքս-լենին-

---

42 Տե՛ս Н. Бердяев. Субъективизм и индивидуализм, СПб., 1901, էջ 22 (Պ. Ստրուվեի առաջաբանը)։

43 Դեռևս Միխայլովսկին էր գրում, որ ամբողջ պատմությունը մարդկային բանականության համար անըմբռնելի իդեաների մարմնացում է (տե՛ս Н. К. Михайловский. Сочинения, հատ. 11, СПб., 1896, էջ 105)։

44 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, էջ 198։

յան մեթոդոլոգիայի կարևորագույն նվաճումներից մեկը) անխուսափելիորեն կհանդեցներ պատմական իրականության աղճատված, հակագիտական հասկացողությանը, որը բազմաթիվ դեպքերում երևում է ժամանակակից բուրժուական պատմա-փիլիսոփայական երկերում[45]։

Լենինն ընդգծում էր, որ ընդհանուրը, եթե այն բխում է տվյալ սիստեմի իրական փոխհարաբերություններից և մարդկային մտքի քմածին ստեղծագործություներ չէ, գիտական աշխարհայացքի համար հսկայական նշանակություն ունի։ Այդպիսի իրական ընդհանուր հասկացություն է, ինչպես բազմիցս նշում էր նա, հասարակական-տնտեսական ֆորմացիայի մարքսիստական հասկացությունը[46]։

Մեծ է Լենինի դերը մարքսիստական մեթոդոլոգիայի այնպիսի մի կարևոր հարցի կոնկրետացման և հարստացման գործում, ինչպիսին է Մարքսի դրույթը պատմականության (իստորիզմի) մասին։ Ցույց տալով, թե ինչպես նեղ օբյեկտիվիզմը հանգեցնում է գործոնների արտարկությանն ու իրական պատմությունը ընդհանուր սխեմաներով նենգափոխելուն, Լենինը ամբողջ ուժով ընդգծում էր, որ այդ ամենի հետևանքը, վերջին հաշվով, լինում է հակապատմականությունը, պատմական փաստերի սուբյեկտիվիստական մեկնաբանությունը։ Նա գրում էր. «Մարքսիստն անհրաժեշտ է համարում ամենայն մանրամասնությամբ հետազոտել այն դասակարգերը, որոնք գոյանում են կապիտալիստական հասարակության մեջ, հիմնական է համարում միմիայն որոշ դասակարգի տեսակետից կատարվող քննադատությունը,— քննադատություն, որ հիմնվում է ոչ թե «անհատի» բարոյական դատողությունների վրա, այլ իրապես կատարվող հասարակական պրոցեսի ստույգ ձևակերպման վրա»[47]։

Իսկական գիտական պատմականությունը, որը, ինչպես ցույց տվեց Լենինը, բուրժուական պատմագրության համար անմատչելի է, հանդիսանում է միայն այն պատմականությունը, որը օրգանապես կապված է կոմունիստական կուսակցականության հետ։ Ահա թե ինչու նա իր «Քաղաքական գծի մասին» հոդվածում մարքսիզմը իր կոմունիստական կուսակցականությամբ անվանում է «դասակարգային պայքարի օբյեկտիվիզմ»[48]։

* * *

Սովետական պատմական գիտության մարքսիստական մեթոդոլոգիական հիմունքների հարստացումն ու զարգացումը, պատմական իմացության բուրժուական տեսությունների դեմ նրա մղած անհաշտ պայքարը, պատմական զարգացմանը թշնամի օբյեկտիվիստական, բուրժուական կոնցեպցիաների մերկացումը Լենինի կողմից և լենինյան տեսական անսպառ ժառանգության գաղափարական հարստությունը հանդիսանում են պատմական իմացության ուժի և աճի կենդանի ակունքները, պատմական գիտության զարգացման լավագույն գրավականը, այն գիտության, որը պատասխանատու է հասարակության առաջ հումանիզմի ամրապնդման և կոմունիզմի վեհ իդեալների իրականացման համար։

---

45 Տե՛ս А. Шафф. Объективный характер законов истории, М., 1959, էջ 123 և հտ.։

46 Տե՛ս, օրինակ, Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, էջ 167—168։

47 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, էջ 576—577։

48 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 18, էջ 416—417։

В. И. ЛЕНИН И НЕКОТОРЫЕ МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ВОПРОСЫ ИСТОРИЧЕСКОЙ НАУКИ

А. М. ВОСКАНЯН, Р. Г. НАВАСАРДЯН

(Резюме)

История была для В. И. Ленина оружием, средством борьбы; как наука, она связывает прошлое с настоящим и одновременно служит твердой опорой для выработки стратегии борьбы революционных и прогрессивных сил против чудовищной эксплуатации и классового угнетения. Прямая задача подлинной науки — «дать истинный лозунг борьбы»,— так определял В. И. Ленин социальные функции и назначение общественных наук, в том числе и науки исторической.

В. И. Ленин придавал исключительное значение методологической стороне исторического познания. Последовательный диалектико-материалистический подход в анализе исторических движений и процессов характеризует ленинские произведения начиная с периода первых его выступлений против народников и «легальных марксистов».

В отличие от буржуазной историографии, переживающей методологический кризис, выраженный как кризис теоретических принципов исторического познания, марксистско-ленинская историография эффективно разрешает возникающие перед ней проблемы, неизменно опираясь на научные методологические принципы, разработанные Марксом и Лениным. Ленинская теория отражения—важнейшее условие углубления исторического познания.

В. И. Ленин придавал большое значение вскрытию того пагубного для исторической науки значения, которое имеют догматизм и релятивизм. Историческая истина — это историческая реальность, отраженная в концепции исследователя; она объективна по своему содержанию, сама по себе не зависит от исследователя. Точно так же объективен по содержанию закон в истории. Сама картина закономерного процесса развития истории раскрывается в понятиях, являющихся формой отражения действительности. И социальная практика, соединяя в себе непосредственную достоверность чувственного и созерцательного со всеобщностью абстрактного мышления, представляет высший критерий истинности, ибо «точка зрения жизни, практики должна быть первой и основной точкой зрения теории познания».

В. И. Ленин дал блестящие образцы искусства отбора, классификации и использования источников. Он не раз подчеркивал важность умения дать социальным движениям истолкование в понятиях, отражающих и закрепляющих в себе научное знание об историческом объекте.

В. И. Ленин настаивал на важности и необходимости «становиться на сторону того или другого класса». Объективизм в историческом исследовании есть лишь «прикрытие», «закрепление классовой борьбы»,

есть отход от историзма. Подлинный историзм связан с партийностью. Марксизм в этом отношении есть «объективизм классовой борьбы», и отстаивание партийности исторической науки — прямая задача и ответственный долг марксистов-историков.

Ленинский вклад в разработку методологических основ теории исторической науки — вклад непреходящей научной ценности в развитие и обогащение исторической мысли, фундамент прогрессивного развития современной историографии.